



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Նախագիծ

Հայեցակարգի նախագիծը մշակվել է «Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....2
2. Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը որպես կրթական բարեփոխումների կարևորագույն բաղադրիչ5
3. Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության ներկա վիճակը.....10
4. Ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտի կրթության առաջնահերթությունները.....19
5. Եզրափակիչ դրույթներ.....27

I. Ներածություն

Սույն հայեցակարգի նպատակն է նպաստել ՀՀ հանրակրթության համակարգում ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության իրավիճակի գնահատմանը և ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրի իրականացման միջոցով առկա հիմնախնդիրների հաղթահարմանը:

Հայեցակարգի հիմնական խնդիրն է ապահովել ժողովրդավարության և մարդու իրավունքների հարգման ու պաշտպանության վրա հիմնված քաղաքականության իրականացումը կրթության բոլոր մակարդակներում՝ հանրակրթության կառավարման, այդ թվում աշակերտական ինքնավարության զարգացման, բովանդակության սահմանման, դասագրքաստեղծ աշխատանքի բարելավման, մանկավարժների պատրաստման և վերապատրաստման, դասավանդման մեթոդների ընտրության և կիրառման ոլորտներում:

Այսպիսով, հայեցակարգային դրույթներն ու մոտեցումներն ուղղված են ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին (սովորողներ, ծնողներ, ուսուցիչներ և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողներ, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ՝ ընդգրկված կառավարման խորհրդում և խորհրդակցական մարմիններում), ինչպես նաև հանրակրթության ոլորտում քաղաքականություն և բովանդակություն մշակող ինստիտուցիոնալ կառույցներին, մասնագետներին, հասարակական կազմակերպություններին:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների արժեքները ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ և օրենքներում: Այդ արժեքները դրված են նաև կրթական փաստաթղթերի հիմքում, ինչն օրինաչափ է, քանզի ժողովրդավարությունը պարզապես կառավարման համակարգ չէ: Ներկա իրավիճակում այն հասարակական կյանքի կազմակերպման լավագույն ձևն է և մարդկության հետագա զարգացումն ապահովելու հնարավորություն:

Այսօր կուտակվել են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումները հնարավոր է նորարարական, ներառական և համագործակցային մոտեցումների դեպքում: Շատ հարցերում ավանդական մոտեցումներն ու լուծումներն այլևս բավարար չեն: Այսօր

հասարակության փոքր խմբերը, որքան էլ բանիմաց, ակտիվ և ազդեցիկ լինեն, չեն կարող միայնակ լուծել առկա խնդիրները: Անհրաժեշտ է ապահովել հասարակության լայն շրջանակների իրազեկվածությունը, մասնակցությունը յուրաքանչյուրի կարողությունների բացահայտման, զարգացման և իրացման միջոցով: Ժողովրդավարությունը, հիմնվելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա, ձևավորում է բարենպաստ միջավայր՝ բացահայտելու հասարակության անդամների կարողությունները՝ դրանք ծառայեցնելով ինչպես անձնային զարգացմանը, այնպես էլ հասարակական խնդիրների լուծմանը:

Ժողովրդավարացումը կարող է նպաստել արդի ժամանակաշրջանում առկա մի շարք գլոբալ հիմնախնդիրների՝ աղքատության աճ և բևեռացում, գործազրկության աճ, տեղեկատվության անկառավարելի հոսքեր, կայուն զարգացման խոչընդոտների և բնապահպանական խնդիրների հաղթահարմանը:

Կրթությունը ժողովրդավարական ավանդույթներ ձևավորելու առաջնահերթ միջոց է: Ստորև դիտարկենք վերոնշյալ խնդիրների լուծման գործում կրթության ունեցած դերը:

1. **Աղքատության աճ և բևեռացում:** Այսօրվա լրջագույն խնդիրներից մեկն աղքատության շարունակական աճն ու հասարակության առավել հարուստ և աղքատ խմբերի միջև տարբերությունների մեծացումն է: Նման բևեռացումը հնարավոր է հաղթահարել հասարակության աղքատ խավերի համար որակյալ կրթական ծառայությունները հասանելի դարձնելու ժողովրդավարական մոտեցման միջոցով:
2. **Գործազրկության աճ:** Բազմաթիվ ծառայությունների մեքենայացման արդյունքում գնալով մեծանում է գործազուրկների թիվը: Շատ դեպքերում գործազրկության պատճառն այն է, որ մարդկանց ուսուցանվող ստանդարտացված գիտելիքներն այլևս պահանջարկ չունեն: Նման իրավիճակում շատ կարևոր է յուրաքանչյուր սովորողի անհատական ուժեղ կողմերի բացահայտումը, որոնց շնորհիվ նա կկարողանա մրցունակ լինել աշխատաշուկայում: Նման զարգացում ապահովելու համար կրթության ժողովրդավարացումն անհրաժեշտություն է:
3. **Տեղեկատվության անկառավարելի հոսքեր:** Տեխնոլոգիաների զարգացման արդյունքում տեղեկությունները և գիտելիքները դարձել են մատչելի և հասանելի բոլորին: Եթե այս հանգամանքը չուղեկցվի ուսումնական հաստատությունների աշխատատեղի ժողովրդավարացմամբ, ապա սովորողները պարզապես չեն վստահի ուսումնական հաստատություններին՝ դրանք համարելով ժամանակավրեպ: Նման

դեպքում սովորելու գործընթացը կտեղափոխվի ուսումնական հաստատություններից դուրս:

4. **Կայուն զարգացման խոչընդոտներ և բնապահպանական հիմնախնդիրներ:**

Հայաստանի Հանրապետությունում ընթացող տնտեսական բարեփոխումները և միջազգային բնապահպանական համագործակցության ընդլայնումը կնպաստեն էկոլոգիական նոր քաղաքականության ձևավորմանը, որը ներկա և ապագա սերունդների համար կստեղծի կայուն երաշխիքներ՝ էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրում առողջ և բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Նման նպատակի իրագործումը կարևոր խնդիր է, և անհնար է առանց բնապահպանական կրթության և քաղաքացիների իրազեկման բարձրացման:

Կրթության համակարգը առաջին հասարակական ինստիտուտն է, որտեղ մարդն առնչվում է ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական հարաբերություններին: Հետևաբար, ժողովրդավարության և մարդու իրավունքների ամրագրումն ուսումնական հաստատություններում էապես կարող է ազդել մարդու գիտակցության և ապրելակերպի վրա:

Կարևոր է հասկանալ, որ մարդու իրավունքները և ժողովրդավարությունը չեն կարող պարզապես դիտարկվել որպես ուսումնական բնագավառ կամ առարկա: ԺՄԻ կրթությունը ամբողջական համակարգ է, որի արմատավորումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ ապահովվեն հետևյալ երեք բաղադրիչները.

- 1) Մարդու իրավունքների և ժողովրդավարության **մասին** ուսուցում: Այս բաղադրիչը ենթադրում է համապատասխան առարկաների, թեմաների ներառում ուսումնական պլանում, արտադասարանական և արտադպրոցական խմբակներում:
- 2) Մարդու իրավունքների և ժողովրդավարության **միջոցով** ուսուցում: Սա նշանակում է, որ ուսումնական գործընթացը, միջանձնային հարաբերությունները պետք է կառուցվեն ժողովրդավարության և մարդու իրավունքների հարգման վրա:
- 3) Մարդու իրավունքների և ժողովրդավարության **համար** ուսուցում: Այս բաղադրիչը նշանակում է, որ սովորողներն ունեն գիտելիքներ, համոզմունքներ և հմտություններ՝ կիրառելու մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքներն իրենց առօրյա կյանքում:

II. Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը որպես կրթական բարեփոխումների կարևորագույն բաղադրիչ

Վերջին տարիներին կրթության ոլորտում իրականացվել են օրենսդրական կարևոր փոփոխություններ՝ կառավարման համակարգի ժողովրդավարացմանն ու կրթության բովանդակության բարելավմանն ուղղված որոշակի քայլեր և բազմաթիվ ծրագրեր:

Կարևոր փոփոխությունների թվում պետք է նշել հանրակրթության կառավարման ապակենտրոնացումը, կրթակարգի ընդունումը, չափորոշիչներում, ծրագրերում և դասագրքերում ժողովրդավարության և մարդու իրավունքների արտացոլումը, ներառական կրթության ներդրումը:

Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում մարդու իրավունքների և ժողովրդավարական կրթության ուղղությամբ համակարգված աշխատանքների իրականացմանը նախորդեցին անկախ պետականության առաջին տարիներին իրականացվող ընդհանուր բարեփոխումները, որոնք կրում էին տարերային բնույթ և ուղղված էին այս կամ այն խնդրի ժամանակավոր լուծմանը, նույնիսկ դպրոցի գործունեությունը կանոնակարգող հիմնական փաստաթուղթը ժամանակավոր կանոնադրությունն էր: Օրենսդրական բացը լրացվում էր կառավարության որոշումներով և նախարարության հրամաններով, իսկ կրթության կառավարման և բովանդակության հիմնահարցերի լուծումը հնարավորինս կարգավորվում էր հրահանգներով և մեթոդական նամակներով:

1990-ական թվականների սկզբին դպրոցական ծրագրերից հանվեց «Հասարակագիտություն» առարկան, որն ամբողջապես քաղաքական ուղղվածություն ուներ, իսկ մյուս առարկաներից՝ մարքս-լենինյան գաղափարաբանությունն ու մեթոդաբանությունը: Հանրակրթական դպրոցում սովորողներին որոշակի աշխարհայացքային գիտելիքներ տալու նպատակով անկախության առաջին տարիներին՝ 1992-1993թթ., նախարարությանն առընթեր գիտամեթոդական խորհրդի և Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ մշակվեցին և ներդրվեցին «Փիլիսոփայության ներածություն», «Պետության և իրավունքի հիմունքներ», «Տնտեսագիտության հիմունքներ», «Տրամաբանություն» առարկաների և «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի ծրագրերը: Այդ առարկաները և «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» ընտրովի դասընթացը ներդրվեցին 9-10-րդ դասարաններում: Չնայած իրենց բարդությանը և տեսական գիտելիքներով ծանրաբեռնվածությանը՝ այդ առարկաները դրական ներգործություն ունեցան հասարակագիտական առարկաների ուսուցման շարունակականությունն ապահովելու

և ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության սաղմերը ձևավորելու հարցում:

1997-2002 թթ. ընթացքում վերանայվեց դպրոցի օրինակելի կանոնադրությունը, 1999 թվականին ընդունվեց «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ուժի մեջ մտան իրավանորմատիվային նոր փաստաթղթեր, հաստատվեցին դպրոցի կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի, հոգաբարձուների խորհրդի, աշակերտական խորհրդի կանոնադրությունները, որոնք նպաստեցին կառավարման և ֆինանսավորման նոր, արդյունավետ ու մարդու իրավունքների տեսակետից ավելի առաջադեմ եղանակների՝ դպրոցական խորհուրդների ստեղծմանը և գործունեությանը, ըստ սովորողների թվի՝ մեկ ամբողջական տողով դպրոցների ֆինանսավորմանը և վերջին հաշվով՝ կրթության ժողովրդավարացմանը: Մանկավարժներն ու ծնողները հնարավորություն ստացան անարգել մասնակցելու դպրոցի կառավարմանը, դպրոցը դարձավ հաշվետու ոչ միայն վերադասին, այլև համայնքին: Այդ գործընթացները մեծ նշանակություն ունեցան կրթության համակարգի հետագա ժողովրդավարացման, ուսումնական հաստատություններում ինքնակառավարման մեխանիզմների արմատավորման, կրթության կառավարման տարբեր մարմինների լիազորությունների տարանջատման համար:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության բնագավառում նոր ձեռքբերում էր հանրակրթական դպրոցի 2001-2002 ուստարվա ուսումնական պլանում «Մարդու իրավունքներ» (8-րդ դասարան), «Քաղաքացիական կրթություն» (9-րդ դասարան) և «Պետություն և իրավունք» (10-րդ դասարան) դասընթացների ներդրումը որպես պարտադիր առարկաներ: Այսպիսով, նշված առարկաների պարտադիր ուսուցումը այդ ժամանակ հաստատված ծրագրերով և դասագրքերով շարունակվեց մինչև 2006 թվականը, երբ անցում կատարվեց 12-ամյա հանրակրթության:

Նշված ժամանակաշրջանում բարեփոխումների իրականացման հիմնական ծրագիրը Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության կառավարման և ֆինանսավորման վարկային ծրագիրն էր: Բացի վերոնշյալից՝ այն նպատակաուղղված էր նաև ուսումնական ծրագրերի բարեփոխմանը, դպրոցների բարելավմանը և դասագրքերի շրջանառու համակարգի ստեղծմանը:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության բովանդակության զարգացմանը մեծապես նպաստեց ՀՀ Կառավարության կողմից 2004 թվականին հավանության արժանացած «Հանրակրթության պետական կրթակարգը», որն իր բնույթով միանգամայն նոր փաստաթուղթ է: Կրթակարգի ընդունումը բացառիկ է նաև ժողովրդավարական մոտեցման, հասարակական քննարկման ծավալի և աշխարհագրության ապահովման առումով: Հայաստանում կրթության իրավունքին և բովանդակությանը վերաբերող ոչ մի հայեցակարգային փաստաթուղթ մինչ

կառավարություն ներկայացնելը այդպիսի խորը, բազմաշերտ հասարակական քննարկում չէր անցել:

Կրթակարգի հիման վրա 2004 թվականին մշակվեց և աստիճանաբար կիրառության մեջ դրվեց «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը», առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը, որոնց հիման վրա մշակվել և հրատարակվել են ընթացիկ ու ամփոփիչ գնահատման թեստերի ժողովածուները, նոր սերնդի դասագրքերն ու ուսուցչի ձեռնարկները, այդ թվում՝ չափորոշիչ բաղադրիչ հանդիսացող հենքային ուսումնական պլանով նախատեսված մարդու իրավունքների և քաղաքացիական կրթությանն անմիջականորեն առնչվող հանրակրթական նոր («Ես և շրջակա աշխարհը», «Հայրենագիտություն», «Հասարակագիտություն», «Առողջ ապրելակերպ») առարկաների դասագրքերն ու ուսուցչի ձեռնարկները: Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության բնագավառում առկա ձեռքբերումները ՀՀ կրթության և գիտության նախարարության և միջազգային ու տեղական կազմակերպությունների համագործակցության արդյունք են: Մինչ հասարակագիտական առարկաների կանոնակարգված ներմուծումը ուսումնական պլան իրենց դրական ներգործությունն են ունեցել նախկինում հրատարակված բազմաթիվ ձեռնարկներ: Մասնավորապես, Ա. Սախարովի անվան «Մարդու իրավունքների պաշտպանության», Գթասրտության և առաջընթացի հիմնադրամի և ԱՄՆ-ի Դեմոկրատիայի աջակցության ազգային հիմնադրամի նախաձեռնությամբ ժողովրդավարության և մարդու իրավունքների հայաստանյան կենտրոնի հովանավորությամբ թարգմանված և հրատարակված «Մարդու իրավունքների դասավանդումը. պրակտիկ գործունեություն տարրական և միջնակարգ դպրոցում» ձեռնարկը: Հետագայում հայերենով հրատարակված ձեռնարկներից կարելի է նշել Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի և Կաթոլիկ օգնության ծառայության աջակցությամբ հրատարակված «Մարդու իրավունքներ» ուսուցչի ձեռնարկը, 1997 թվականին Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի օժանդակությամբ թարգմանված «Երեխան հանդիպում է երեխային: Երեխաների համաձայնագիրը և նրանց իրավունքները» ձեռնարկի աշխատանքային օրինակը:

Մարդու իրավունքների կրթության և քաղաքացիական կրթության ներառման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ 2000 թվականին ԿԳ նախարարության կողմից հաստատված տարրական դպրոցի 1-3-րդ դասարանների ուսուցիչների «Բարև, ես եմ: Իմ իրավունքներն ու պարտականությունները» լրացուցիչ ուսումնական ձեռնարկը, որը նույնպես հրատարակվեց Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի օժանդակությամբ: Մարդու իրավունքների և ժողովրդավարական կրթության գործում, բացի վերոնշյալ դասագրքերի հրատարակումից, զգալի առաջընթաց ապահովեցին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ դպրոցում «Կյանքի հմտություններ» առարկայի ներդրման ուղղությամբ իրականացված ծրագիրը,

Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի, ԲՀԻՕՀ-ի, Հայաստանի սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի, «Փրոջեքթ Հարմոնի», «Հայաստանի պատանեկան նվաճումներ» և այլ կազմակերպությունների կողմից իրականացված դպրոցական ուսուցման և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը, որոնց գնահատականը տրված է «Հայաստանում մարդու իրավունքների կրթության իրավիճակի ուսումնասիրություն» զեկույցում (ՄԱԿ-ի ՄԱԶԾ Երևան, 2005): 2008թ.-ից Հայաստանի դպրոցներում իրականացվեց «Քաղաքացի նախագիծ» համայնքային հիմնախնդիրների հետազոտման ուսումնական ծրագիրը, որը նախատեսված էր ՀՀ միջնակարգ դպրոցների «Հասարակագիտություն» ինտեգրված առարկայի համար և հետագայում դարձավ «Հասարակագիտություն» առարկայի պարտադիր գործնական աշխատանք:

Սույն հայեցակարգի հետ կապված՝ մեծ արժեք և հետաքրքրություն է ներկայացնում 2008 թվականին սկսված Մարդու իրավունքների կրթության գործողությունների ծրագրի ստեղծման աշխատանքը: Մարդու իրավունքների կրթության գործողությունների ծրագրի ստեղծման աշխատանքային ծրագրի շրջանակներում 2008թ-ին, ի պատասխան կրտսեր և միջին դպրոցներում Մարդու իրավունքների կրթության իրավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի նախաձեռնության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հավաստել է, որ Հայաստանը միանում է այդ նախաձեռնությանը, և որ նախարարությունը սկսում է դպրոցական կրթական համակարգում Մարդու իրավունքների կրթության գործողությունների ծրագրի մշակումը: Գերագույն հանձնակատարին ուղղված նամակով նախարարությունը տեղեկացրել է, որ Գործողությունների ծրագրի մշակման պատասխանատվությունը կստանանի Կրթության ազգային ինստիտուտը (ԿԱԻ), և որ Գործողությունների ծրագիրը կազմելու համար ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ, որը բաղկացած էր ԿԱԻ-ի երկու և նախարարության մեկ աշխատակցից: Ենթադրվել է, որ դոնորները կաջակցեն գործընթացն արագացնելուն և կապահովեն համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Մշակվել է փաստաթուղթ, որն ուրվագծում է ՄԱԶԾ-ի տեսլականը և այն քայլերը, որ կձեռնարկի ՄԱԶԾ-ն՝ ազգային և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ գործընթացին աջակցելու, ազգային համապատասխան գործընկերների/շահառուների կարողությունները հզորացնելու և «վերջնարդյունքի» պատշաճ որակ ապահովելու համար: Չնայած այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների կրթության գործողությունների ծրագիրը պետք է ընդգրկի բոլոր ոլորտները՝ սկսած մանկապարտեզներից և դպրոցներից մինչև աշխատանքային վայրերում պրակտիկ կրթական ծրագրերը և դատական, քաղաքացիական և

համայնքային ծառայողների համար ուսումնական ձեռնարկներ պատրաստելը, ՄԱԶԾ-ն առաջարկել է նախնական փուլն սկսել դպրոցական կրթական համակարգից:

Բարեփոխումների արդի փուլն սկսվել է 2009 թվականից և հիմնականում իրականացվում է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրով: Այս փուլում իրականացվող ծրագիրն ընդգրկում է ոչ միայն նախադպրոցական և հանրակրթության, այլ նաև բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտները և նպատակաուղղված է նախադպրոցական կրթության մատչելիության ապահովմանը, առանձին գործող ավագ դպրոցների ստեղծմանն ու դրանց կարողությունների հզորացմանը, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, մանկավարժական կրթության բարելավմանը, բարձրագույն կրթության բնագավառի բարեփոխմանը:

Ի լրումն վերը ներկայացված գործողությունների՝ նշենք, որ 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացավ նաև Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարական կրթության և մարդու իրավունքի կրթության խարտիային, որի նպատակն է նպաստել ԺՄԻ կրթության ամրապնդմանը ԵԽ անդամ երկրներում: Դրան հաջորդեց Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՀՀ կրթության ու գիտության նախարարության միջև 15.07.2011թ. ստորագրված փոխըմբռնման հուշագրի համաձայն իրականացված ՀՀ հանրակրթության համակարգում մարդու իրավունքների կրթության իրավիճակի և կրթության բովանդակության մշակման՝ մարդու իրավունքի վրա հիմնված մոտեցման գնահատման ուսումնասիրությունը և վերլուծական զեկույցի պատրաստումը:

Տվյալ զեկույցի պատրաստմանը նախորդեցին համապատասխան հարցաթերթիկների կազմումը, գնահատման չափանիշների և սանդղակի մշակումը: Այդ ընթացքում ընդհանուր առմամբ վերլուծվել և գնահատվել են կրթության բովանդակությունը սահմանող 10 նորմատիվ իրավական ակտեր, 1-11-րդ դասարանների 131 դասագիրք, ուսուցչի և դասղեկի 12 ձեռնարկ, 2 քրեստոմատիա, ուսուցիչների վերապատրաստման 5 ծրագիր, ձեռնարկ և ուղեցույց, 1 ընթացիկ գնահատման թեստերի ժողովածու, 1 գործնական աշխատանքների աշակերտական ձեռնարկ:

Վերլուծության արդյունքում մշակված առաջարկները այժմ էլ արդիական են և ուղղված են կրթության պետական կառավարման լիազորված մարմնին՝ Կրթության և գիտության նախարարությանը, նրա առանձին ստորաբաժանումներին՝ Կրթության ազգային ինստիտուտին և Կրթական ծրագրերի կենտրոնին, Դասագրքերի շրջանառու հիմնադրամին, դասագրքաստեղծ աշխատանքներում ընդգրկված անձանց՝ ուսումնական նյութերի հեղինակներին, հրատարակչությունների ղեկավարներին և տպագրության մասնագետներին, խմբագիրներին և գրքի ձևավորողներին, դասագրքերի փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների անդամներին,

ինչպես նաև մանկավարժական մասնագիտացում ունեցող բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, ուսուցիչների վերապատրաստման հարցերով զբաղվող կազմակերպություններին (այդ թվում՝ ՀԿ-ներին), դասավանդման մեթոդիկայի մասնագետներին, գիտնականներին, մանկավարժական բուհերի դասախոսներին, դպրոցների տնօրենությանը և դպրոցական խորհուրդներին, ուսուցիչներին, աշակերտական և ծնողական խորհուրդներին (այդ թվում ծնողներին և սովորողներին):

Հանրակրթության բարեփոխումների ներկա փուլում ձեռք բերված արդյունքները կներկայացվեն սույն հայեցակարգի հաջորդ բաժնում:

III. Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության ներկա վիճակը

Օրենսդրական հիմքերը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2009 թվականին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրակրթության բնագավառը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հանրակրթության մասին օրենքում ամրագրված է դրույթ, որ եթե միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, ապա գերակա են միջազգային պայմանագրերի նորմերը: Բնագավառի կարգավորմանն է ուղղված նաև 2011 թվականին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Օրենքը սահմանում է, որ պետական քաղաքականությունն իրականացվում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթի ապահովմամբ: Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների դպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները լիովին համահունչ են մարդու իրավունքների վերաբերյալ առկա միջազգային փաստաթղթերի պահանջներին և մոտեցումներին: «Հանրակրթության մասին» ՀՀ

օրենքի համաձայն հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում և վերահսկում է.

- 1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
- 2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.
- 3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.
- 4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.
- 5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.
- 6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.
- 7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.
- 8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

ՀՀ-ում առաջին անգամ օրենքով մանրամասնորեն սահմանվել են սովորողների, մանկավարժական աշխատողների և ծնողների իրավունքները: Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Այլ իրավունքների թվում շեշտադրվում է ծնողի համաձայնությամբ ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև

տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը ընտրելու իրավունքը: Մարդու և երեխայի իրավունքների տեսանկյունից արժևորվում են Հանրակրթության մասին օրենքի հետևյալ դրույթները.

- սովորողի պաշտպանված լինելը ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ռոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,
- մասնակցությունը ուսումնական հաստատության կառավարմանը,
- ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,
- օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Մարդու իրավունքների և երեխայի իրավունքների համատեքստում հիշատակման են արժանի նաև սովորողների առողջության պահպանման, նրանց խրախուսման վերաբերյալ հողվածները, որոնք սահմանում են բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և բարոյապես ու նյութապես խրախուսված լինելու իրավունքները:

Կրթության վերաբերյալ օրենսդրության մեջ մանրամասնորեն սահմանված մանկավարժական աշխատողների և ծնողների իրավունքների ու պարտականությունների իմացությունը նույնպես կարևոր է կրթական միջավայրի և արժեքների վերլուծության ու գնահատման համար: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դրույթները դիտարկենք ազատ գործունեության հնարավորությունների տեսակետից:

Ըստ օրենքի՝ մանկավարժական աշխատողն իրավունք ունի՝

- մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը,
- մասնակցելու ուսումնական գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,
- մասնակցելու վերապատրաստումների, գիտաժողովների, քննարկումների և լսումների, իր շահերի պաշտպանության նպատակով ստեղծելու կազմակերպություններ, արհմիություններ կամ անդամակցելու դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ընտրելու և ընտրվելու համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում,
- պաշտպանված լինելու սովորողների, մանկավարժական և այլ աշխատողների այնպիսի գործողություններից, որոնք նսեմացնում են իր մասնագիտական հեղինակությունն ու արժանապատվությունը:

Կրթության բովանդակությանը վերաբերող հարցերում մանկավարժական աշխատողը կարող է՝

- առաջարկներ կատարել առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման վերաբերյալ,
- ազատորեն ընտրել և կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ,
- իր ընտրությամբ օգտագործել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքերը և ուսուցողական նյութերը, ձեռնարկները և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդները:

Ոչ պակաս կարևոր են նաև մանկավարժական աշխատողի պարտավորությունները սովորողի և նրա ծնողի, իր աշխատանքի արդյունքների նկատմամբ: Այսպես, մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

- հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,
- նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքները,
- ապահովել հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, համագործակցել ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում և կատարել այլ պարտավորություններ՝ ելնելով իր գործունեության բնույթից:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների ապահովման առումով հիշատակման է արժանի սովորողի ծնողի իրավունքների և պարտականությունների հստակ և գրեթե ամբողջական սահմանումը կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտում: Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ սովորողի ծնողն իրավունք ունի երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը, մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանն ու նրա գործունեության գնահատմանը: Ծնողը կարող է անարգել դիմել համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով, պաշտպանել իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում: Երեխայի իրավունքների ապահովման և պաշտպանության տեսանկյունից

դիտարկելով նշված օրենքը՝ առաջնահերթ են ծնողի հետևյալ պարտավորությունները՝

- ապահովել համապատասխան պայմաններ՝ կրթություն ստանալու համար, մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին,
- ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար,
- հարգել երեխայի արժանապատվությունը,
- դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների նկատմամբ,
- դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ,
- դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ:

Կրթության, այդ թվում հանրակրթության առկա վիճակը բնութագրող ամենաարդիական փաստաթուղթը «Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրն» է, որը կառուցված է 3 հիմնական դրույթների վրա.

1. կրթության մատչելիության առավել ապահովում,
2. կրթության որակի ապահովում,
3. կրթության արդյունավետության գնահատում:

Մարդու՝ կրթություն ստանալու իրավունքների տեսակետից, փաստաթուղթը պարունակում է կատարված բարեփոխումների անաչառ վերլուծություն և սահմանում է նպատակներ: Գերխնդիր է դարձել կրթության որակի բարձրացումը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիության ապահովումը: Համակարգի հիմնական բնութագրիչներից են կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշները, որոնց հիման վրա կարելի է դատել այս կամ այն սոցիալական խմբի համար կրթական ծառայությունների մատչելիության մասին: Ըստ կրթության զարգացման ծրագրի՝ մատչելիության առումով ամենախոցելին նախադպրոցական կրթությունն է: Երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար

մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Այս գործընթացում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում:

Ծրագրում նշվում է, որ Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա, և համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է: 2014-15 ուստարում այն միջինում կազմել է մոտ 87.8%: Տարրական աստիճանում զուտ ընդգրկվածությունը կազմել է 93.1%, միջինում՝ 92.6%, ավագում՝ 72.4%: Հիմնական կրթության աստիճանում տարածքային, գենդերային ու աղքատության գործոնները էական ազդեցություն չունեն ընդգրկվածության ցուցանիշի վրա: Սակայն աղքատ և ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը ավագ դպրոցում էապես անհավասար է՝ ի տարբերություն հիմնական դպրոցի: Ավագ դպրոցում ամենահարուստ խմբի համախառն ընդգրկվածությունն ամենաաղքատից 1.3 անգամ ավելի բարձր է, քանի որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո հանրակրթական համակարգից դուրս եկածների մեծ մասն աղքատներ են, սակայն դա չի նշանակում, որ նրանք բոլորն էլ դուրս են մնում կրթությունից. նրանց մի մասը կրթությունը շարունակում է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Կրթության մեջ ներգրավվածության առումով ավագ դպրոցում առկա է նաև ըստ սեռերի ընդգրկվածության որոշ անհամամասնություն: Ինչպես վկայում են 2014-15 ուստարվա վիճակագրական տվյալները, տարրական և հիմնական դպրոցներում սովորողների շրջանում տղաները աննշան չափով գերակշռում են: Սակայն պատկերը փոխվում է ավագ դպրոցում, երբ սովորողների թվաքանակում 22%-ով ավել է աղջիկների թիվը, ինչը փաստում է այն մասին, որ հիմնական կրթությունից հետո դպրոցից դուրս եկողների մեծ մասը տղաներ են:

Ծրագրում ներկայացվում է նաև կրթության մատչելիությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, ինչն ուղղակիորեն առնչվում է ոչ միայն կրթության իրավունքին, այլ նաև որևէ խտրականության բացառմանը: Նշվում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալներն ամբողջական չեն. ըստ մոտավոր գնահատականների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը հանրապետությունում մոտ 8000 է: Մինչդեռ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում և ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաների թիվը մոտ 4000 է: Քանի որ հատուկ կարիքներով երեխաների բացահայտման համակարգը և ներառական

կրթությունը դեռևս համատարած ներդրված չեն, միարժեքորեն հնարավոր չէ ասել՝ այդ երեխաները կրթությունից դուրս են մնում, թե՞ հաճախում են հանրակրթական հաստատություններ, սակայն պաշտոնապես ճանաչված չեն որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

Կարևոր է նաև կրթության զարգացման պետական ծրագրում դասագրքերին տրված գնահատականը: Մասնավորապես ծրագրի 2-րդ գլխի ամփոփման 10-րդ կետում նշված է՝ «դասագրքերի որակը բովանդակային առումով բարելավման կարիք ունի»: Ուշագրավ է նաև ծրագրի՝ կրթության զարգացման ապահովման ազգային համատեքստի հիմնական նպատակադրումների թվում առաջինը «Անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում» սկզբունքի ամրագրումը: Նկատի ունենալով մեր ուսումնասիրության համար այս հարցի կարևորությունը՝ ծրագրի 3-րդ գլխի 73-րդ կետը մեջբերվում է ամբողջությամբ. «Հայաստանի Հանրապետությունն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ: Այս գործընթացում հսկայական է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, որը կրողը կլինի ազգային արժեքների՝ համադրված քաղաքացիական հասարակության առաջադիմական մշակույթի հետ»:

Ինչպես բազմաթիվ այլ պետական ծրագրային փաստաթղթերում, այստեղ ևս կրթությունը դիտարկվում է աղքատության հաղթահարման և մարդկանց բարեկեցության բարձրացման հիմնական գերակայությունների շարքում: Ծրագրում ամրագրված ռազմավարական մոտեցումների մեջ հատուկ շեշտադրված են դրույթներ՝ կրթության բոլոր ոլորտներում համագործակցության ու մասնակցության խթանման, քաղաքացիական հասարակության օժանդակության ստացման, քաղաքացիների համար մատչելի և որակյալ կրթության հավասար հնարավորությունների ապահովման, ռեսուրսների արդարացի բաշխման վերաբերյալ: Ռազմավարական մոտեցումների բաժնի 95-րդ կետն ամբողջացված է շատ կարևոր հետևյալ դրույթով. «Միաժամանակ կրնդայնվի քաղաքացիական հասարակության, գործարար համայնքի, ինչպես նաև կրթության համակարգի յուրաքանչյուր ներկայացուցչի, մասնակցության հնարավորությունները կրթության կառավարման և ծրագրերի իրականացման ոլորտներում»:

Մեծ նշանակություն ունի նաև կրթության զարգացման գերակայությունների թվում նշված կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավման խնդիրը: Այստեղ հստակ սահմանվում են հանրակրթական առանձին առարկաների դասավանդման առաջնայնության, ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման, սովորողների համագործակցային, հետազոտական, ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացման գերակայությունները: Չափազանց

կարևոր է նաև Ծրագրի 101 կետի 5-րդ ենթակետը, որտեղ ասված է. «Դասագրքերի բովանդակային որակի բարելավման նպատակով մասնագիտական աջակցություն կցուցաբերվի հեղինակային խմբերին և հրատարակիչներին, ելնելով միջազգային լավագույն փորձից՝ կստեղծվեն դասագրքերի մշակման ուղեցույցներ», իսկ ժողովրդավարության, մարդու իրավունքների և երեխայի իրավունքների տեսակետից՝ 6-րդ կետը, որտեղ նշվում է, որ «կխրախուսվեն հանրակրթական և այլ ուսումնական հաստատությունների համայնքային ակտիվությունը, սովորողների մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը»:

Ուսումնական հաստատություններում առկա վիճակը՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների տեսանկյունից: Առկա իրավիճակի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հիմնական խնդիրներից առաջինը ուսումնական հաստատության ժողովրդավարական կառավարման ապահովումն է: Թեև Հայաստանի Հանրապետության հանրակրթական հաստատություններում ստեղծվել են ժողովրդավարական կառավարման մեխանիզմները (կառավարման կոլեգիալ մարմին՝ խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, մանկավարժական խորհուրդ և այլն), սակայն այս մեխանիզմների արդյունավետությունը ցածր է: Խորհուրդը հանրակրթական հաստատության կառավարման կոլեգիալ մարմինն է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազորություններով կարող է շոշափելի նպաստ բերել դպրոցի ժողովրդավարացման գործընթացին: Մասնավորապես, խորհուրդն է ընտրում դպրոցի տնօրենին. վերջինս էլ հաշվետու է խորհրդի առջև իր գործունեության մի շարք բնագավառներում: Սակայն կառավարման խորհրդի գոյությունը հիմնականում ձևական է: Խորհրդի ձևավորման գործընթացը թափանցիկ և մասնակցային չէ: Խորհուրդը որպես կանոն ակտիվանում է դպրոցի տնօրենի ընտրության ժամանակ (իսկ տնօրենների ընտրությունը հաճախ ուղղորդված է): Խորհուրդն ինքն իրեն չի դիտում որպես լիազոր մարմին, որը կարող է պահանջել և ապահովել տնօրենի հաշվետվողականությունը: Որպես կանոն՝ խորհուրդը լռելյայն ընդունում է դպրոցի տնօրենի ցանկացած որոշում կամ առաջարկ: Խորհրդի անդամները հետաքրքրություն չեն ցուցաբերում իրենց ջանքերը և ժամանակը խորհրդի աշխատանքներին նվիրաբերելու հարցում:

Աշակերտական խորհուրդն այն օղակն է, որը կարող է նպաստել հանրակրթական ուսումնական հաստատության ժողովրդավարական կառավարման բարելավմանը՝ լսելի դարձնելով սովորողների կարծիքը, ինչպես նաև պաշտպանելով նրանց իրավունքները: Սակայն աշակերտական խորհուրդների գործունեությունը Հայաստանում մի շարք լուրջ թերություններ ունի: Մասնավորապես, աշակերտական խորհուրդների և վերջիններիս նախագահների ընտրությունների ժամանակ հաճախ է

խախտվում սովորողների հավասար հնարավորությունների իրավունքը: Բազմաթիվ են դեպքերը, երբ ուսուցիչները կամ դպրոցի տնօրենությունը ուղղակի և անուղղակի միջոցներով միջամտում և ուղղորդում են ընտրությունների ընթացքը: Ուսուցիչների և տնօրենության կողմից միջամտությունն ընտրություններին հիմնականում տեղի է ունենում կառավարելի և «ներկայանալի» աշակերտական խորհուրդներ ձևավորելու նպատակով: Հայաստանի դպրոցներում աշակերտական խորհուրդների գործունեության շրջանակը չափազանց սահմանափակ է: Աշակերտական խորհուրդների գործունեությունը որպես կանոն սահմանափակվում է մշակութային միջոցառումների կազմակերպմամբ: Աշակերտական խորհուրդները, որպես կանոն, չեն օգտագործում իրենց խորհրդատվական ձայնը դպրոցի խորհուրդներում, չափազանց պասիվ են դպրոցի ներքին կյանքը կանոնավորող նորմերի մշակման և գործադրման հարցերում, գործնականում չեն ներկայացնում ու պաշտպանում սովորողների շահերը և իրավունքները: Չափազանց հազվադեպ են համայնքային խնդիրների լուծման գործընթացում աշակերտական խորհուրդների ներգրավման օրինակները: Դպրոցների տնօրենությունը գործուն քայլեր չի ձեռնարկում աշակերտական խորհուրդների գործունեության ոլորտն ընդլայնելու և նրանց դերը դպրոցի կյանքում ավելի առարկայական դարձնելու ուղղությամբ: Աշակերտական խորհուրդների գործունեությունը քիչ թե շատ արդյունավետ է այն դպրոցներում, որոնք կանգնած են հանրապետության դպրոցներում աշակերտական խորհուրդների ձևավորման ակունքներում:

Ծնողական խորհուրդը նույնպես կարող է նշանակալի դերակատարություն ունենալ հանրակրթական հաստատության կրթության որակի նկատմամբ վերահսկողություն սահմանելու գործում, ինչպես նաև նպաստել դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ կապ հանդիսանալով դպրոցի և արտաքին աշխարհի միջև: Սակայն ծնողական խորհուրդների գործունեությունը մի շարք թերություններ ունի: Որպես կանոն՝ ծնողական խորհուրդներում ընդգրկված ծնողները չափազանց պասիվ են: Նրանք հիմնականում իրազեկված չեն ծնողական խորհրդի լիազորությունների վերաբերյալ և հարկ եղած դեպքերում խուսափում են բարձրացնել իրենց օրինական պահանջները: Ծնողական խորհրդի անդամները հետաքրքրություն չեն ցուցաբերում իրենց ջանքերը և ժամանակը խորհրդի աշխատանքներին նվիրաբերելու գործում: Դպրոցի տնօրենները միջամտում են ծնողական խորհուրդների ձևավորման գործընթացին, ինչի արդյունքում դպրոցում ձևավորված ծնողական խորհուրդը, ինչպես նաև դպրոցի կառավարման խորհրդում ծնողական խորհրդի ներկայացուցիչները որպես կանոն լոյսալ դիրքորոշում են ունենում դպրոցի տնօրենի նկատմամբ: Ծնողական խորհուրդներում ներգրավված ծնողներն իրենց անդամակցությունը դիտարկում են ավելի շատ որպես սեփական երեխայի շահերը

պաշտպանելու լծակ, այլ ոչ թե սովորողների ընդհանուր խնդիրները լուծելու միջոց: Ավագ դպրոցում վերոհիշյալ խորհուրդների հետ կապված խնդիրները ավելի խորն են:

Հայաստանի Հանրապետությունում հատուկենտ են այն կրթական ծրագրերը (օրինակ՝ կարճատև դասընթացները), որոնք կնախապատրաստեին հանրակրթական հաստատությունների մանկավարժական և վարչական աշխատակիցներին, աշակերտներին, ինչպես նաև ծնողներին՝ դպրոցի խորհրդատվական մարմիններում գործուն մասնակցություն ցուցաբերելու համար:

IV. Ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտի կրթության առաջնահերթությունները

Դպրոցը բազմաթիվ շահակիցներ ունեցող հաստատություն է: Դպրոցի արդյունավետ գործունեությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ բոլոր շահակիցները՝ պետությունը, սովորողները, ծնողները, ուսուցիչները, կառավարիչները, հասարակությունը առաջնորդվում են ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքներով: Դպրոցը զգայուն կառույց է, ուստի որևէ շահակցի կամ շահակիցների խմբի անտեսումը ստեղծում է խոչընդոտներ: Միայն փոխադարձ հարգանքի և մասնակցային մոտեցման միջոցով է հնարավոր դպրոցի արդյունավետ գործունեությունը:

ԺՄԻ կրթությունը հատկապես կարևոր է սովորողների համար: Սովորողներն ուսուցման գործընթացում անխուսափելիորեն բախվում են սխալվելու, ռիսկի դիմելու, օգնություն և հոգատարություն ակնկալելու խնդիրներին: Սովորողները կխուսափեն կրթության համար այդ բացառիկ հնարավորությունից, եթե չզգան, որ դպրոցի մշակույթը պատրաստ է հարգելու իրենց իրավունքները: Հետևաբար, ԺՄԻԿ-ը պարզապես ուսուցման թեմա չէ: Այն էական ազդեցություն կարող է ունենալ ուսուցման գործընթացի վրա:

Կարևորելով մինչ այժմ իրականացված ԺՄԻ կրթության ծրագրերը՝ առաջարկում ենք իրավիճակի բարելավմանն ուղղված հետևյալ հայեցակարգային դրույթները և քայլերը, որոնք կհանգեցնեն ցանկալի վերջնարդյունքների:

1. Կրթական հիմնական ծրագրերը պլանավորելիս պետական չափորոշիչների մշակման գործընթացում ապահովել ԺՄԻ կրթության առաջնայնություն՝ ըստ կրթության բոլոր աստիճանների՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն մասնագիտական կրթություն:

Փորձը ցույց է տալիս, որ այս քայլի արդյունավետությունը հնարավոր է ապահովել տվյալ գործընթացում պետական համապատասխան կառույցների և հիմնական շահակիցների, այդ թվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սերտ համագործակցության և սովորողների գործուն մասնակցության շնորհիվ:

ԺՄԻ կրթության պլանավորումը պետք է ներառի ավելի տեսանելի, գործնական մոտեցում՝ հիմնված տվյալ ուսումնական հաստատության սաների, սովորողների, ուսանողների, հանրության հիմնական իրավունքների, պահանջմունքների, կարիքների սահմանման և դրանց առաջնահերթությունների որոշման վրա: Այդ մոտեցմամբ էլ պետք է կազմվի ուսումնական ծրագիրը: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների խնդրին, ինչն առավել կարևորվում է՝ կապված ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության անցման հետ:

ԺՄԻ կրթության պլանավորման ժամանակ կարևոր է նաև հաշվի առնել հետևյալը.

- 1) ԺՄԻ կրթության նպատակը այնպիսի գործողությունների խրախուսումն ու իրականացումն է, որոնք ուղղված են տվյալ ուսումնական հաստատությունում ընդգրկված և դրա հետ առնչություն ունեցող բոլոր անձանց (սաներ, սովորողներ, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, վարչական աշխատողներ, սպասարկող անձնակազմ, ծնողներ) իրավունքների իրացմանը և ժողովրդավարական կառավարման ապահովմանը:
- 2) ԺՄԻ կրթության ծրագիրը յուրաքանչյուր հիմնական կրթական ծրագրի հենքն ու անբաժանելի մասն է, և դրա իրականացումը ամրապնդում է բոլոր այն անձանց և կազմակերպությունների ներուժը, որոնք պատասխանատու են մարդու իրավունքների պաշտպանության համար, և արդյունքում նպաստում է քաղաքացիական հասարակության կայացմանն ու ժողովրդավարական պետության զարգացմանը:
- 3) Անհրաժեշտ է պլանավորել ակնկալվող արդյունքները, որոնք պետք է լինեն չափելի:
- 4) ԺՄԻ կրթության արդյունավետությունն ապահովելու համար պետք է նախատեսել մարդկային և ֆինանսանյութական բավարար ռեսուրսներ:

2. Ուսումնական հաստատությունների գործունեությունը և կրթական գործընթացն իրականացնել ժՄԻ կրթության հիման վրա

- 1) ԺՄԻ կրթությունը պետք է իրականացվի նախադպրոցական տարիքից՝ շահագրգիռ բոլոր կողմերի՝ պետական կրթական քաղաքականություն մշակողների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության ոլորտի մասնագետների, ուսումնական հաստատությունների, ծնողների, սովորողների և ուսանողների ինքնավարության մարմինների, ՀԿ-ների, երիտասարդական կազմակերպությունների և ՋԼՄ-ների լայն համագործակցությամբ՝ ապահովելով համակարգային մոտեցում:
- 2) Իրենց գործունեությունն իրականացնելիս, անկախ տվյալ հաստատության կարգավիճակից, կառուցվածքից, սեփականության ձևից, ենթակայությունից կամ այլ հանգամանքներից, ուսումնական հաստատությունները ոչ միայն պարտավոր են ապահովել մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքները, այլև պետք է ամեն կերպ խրախուսեն կրթության յուրաքանչյուր օղակում երեխաների և սովորողների ակտիվ մասնակցությունը, ինքնադրսևորումը, շփումները, համատեղ աշխատանքն ու համագործակցությունը:

Ուսումնական հաստատություններում կարգապահության պահպանմանն ուղղված գործողություններում պետք է բացառել սովորողների և մանկավարժների իրավունքների անտեսումը, մարդկային արժանապատվության վիրավորումը: Վերոնշյալ հայեցակարգային դրույթների կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ է.

ա. Ուսումնական հաստատություններում ստեղծել այնպիսի միջավայր, որը կերաշխավորի երեխաների, սովորողների, ուսանողների, մանկավարժների, աշխատակիցների կյանքի, առողջության, հանգստի հիմնարար իրավունքների պաշտպանությունը: Այդ գործընթացը ենթադրում է ֆիզիկական և առողջ սոցիալական միջավայրի ապահովում, խաղի, ֆիզիկական ակտիվության դրսևորման, հանգստի կազմակերպման հնարավորությունների ստեղծում՝ դասամիջոցներին և դասերից հետո, պատշաճ ջերմային ռեժիմի ապահովում, առողջ սննդի հնարավորություն, բացառապես առողջ ապրելակերպին համահունչ վարքագծի խրախուսում: Այդպիսով սովորողների նկատմամբ պետք է ցուցաբերել համակողմանի մոտեցում՝ կարևորելով ոչ միայն ակադեմիական, այլև առողջապահական, ֆիզիկական, հուզական, սոցիալական, հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

բ. Հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացնել համապատասխան միջոցառումներ երեխայի կրթության, ազատ արտահայտման

իրավունքի լիարժեք իրացման համար: Ապահովել հանրակրթության մատչելիությունը բոլոր սովորողների համար: Մասնավորապես, ապահովել բոլոր երեխաների հաճախումը դպրոց: Դպրոցների շենքային հնարավորությունները, գրադարանները, էլեկտրոնային ռեսուրսները մատչելի դարձնել բոլոր սովորողների համար: Ապահովել համագործակցային և հաշվետվողական աշխատատեղերի ընտանիքների հետ:

գ. Ուսումնական հաստատության կառավարման մարմինների, ուսուցիչների և ծնողների միջև ձևավորել բաց մտածողության և հարաբերությունների այնպիսի մշակույթ, որում կրթական գործընթացի բոլոր մասնակիցները ազատորեն կարտահայտեն իրենց տեսակետներն ու դիրքորոշումները: Այս դրույթը կյանքի կոչելու համար սովորողներին պետք է դիտարկել որպես ուսումնական գործընթացի կարևոր մասնակիցներ՝ ապահովելով նրանց ներգրավումը ուսումնական հաստատության կառավարման և ուսումնական գործընթացներում, ինչպես նաև համայնքային կյանքում: Մասնավորապես, պետք է ձևավորել քաղաքացիական պատասխանատվության արժեհամակարգ հարմարվողականության փոխարեն, առօրյա հարաբերություններում պետք է հաշվի առնել սովորողի շահերը և հանրային բարիքի ստեղծման գործում կարևորել յուրաքանչյուրի մասնակցության անհրաժեշտությունը:

դ. Սովորողներին արժևորել բազմակողմանիորեն. նրանց մասին չդատել միայն ակադեմիական արդյունքներով: Բացահայտել ու զարգացնել սովորողների շնորհները, հնարավորություն տալ դրսևորելու իրենց կարողությունները և նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշմանը: Երեխաների, սովորողների հետ հարաբերությունները կառուցել՝ հաշվի առնելով նրանց ուժեղ կողմերը, աջակցելով նրանց ընդհանուր ներուժի զարգացմանը:

ե. Ժողովրդավարության և մարդու իրավունքների ուսուցումը պետք է դիտարկել որպես ուսուցման գործընթացի հիմք՝ ապահովելով դրա ներառումը կրթական բոլոր աստիճաններում և ուսումնական բնագավառներում: Մասնավորապես, ԺՄԻ կրթությունը պետք է սկսել նախադպրոցական տարիքից:

զ. Ուսուցման գործընթացում հարգել սովորողների առանձնահատկությունները և դրանք օգտագործել հարուստ, բազմազան և փոփոխացնող միջավայր ստեղծելու նպատակով: Ապահովել մեթոդների այնպիսի բազմազանություն, որը հնարավորություն կտա սովորել տարբեր ձևերով:

է. Մանկավարժների ընտրության, վերապատրաստման, ատեստավորման և որակավորման տարակարգերի շնորհման գործընթացում ներառել ԺՄԻ կրթության թեմաներ և գնահատել ուսուցիչների՝ ԺՄԻ կրթության ոլորտում

ունեցած ձեռքբերումները: Ուսուցիչների, վերապատրաստողների, կրթության կառավարման ոլորտի աշխատողների մասնագիտական զարգացման բոլոր ծրագրերում պարտադիր ներառել ԺՄԻ կրթությանն առնչվող թեմաներ: Մանկավարժների և կրթության կառավարման ոլորտի աշխատողների համար անցկացնել մասնագիտական զարգացման դասընթացներ՝ հաղորդակցության, համագործակցության, որոշումների կայացման թեմաներով, ինչը հնարավորություն կտա արմատավորելու ժողովրդավարական աշխատանք:

ը. Դասավանդման գործընթացի և մանկավարժական աշխատանքի գնահատման ժամանակ և տարաբնույթ մասնագիտական մրցույթներում հաշվի առնել ԺՄԻ կրթության մեթոդների առկայությունը:

3. ԺՄԻ կրթության բովանդակությունը սահմանելիս հաշվի առնել յուրաքանչյուր տարիքային խմբի համար հիմնական կոմպետենցիաների մշակման անհրաժեշտությունը:

Կոմպետենցիաների մշակման ժամանակ պետք է նկատի ունենալ, որ.

1) Դրանց մի մասը արդիական է ցանկացած տարիքային խմբի համար:

2) Մշակված կոմպետենցիաներին կարելի է տիրապետել ոչ միայն ուսումնական հաստատությունում ուսանելիս, այլև ոչ ֆորմալ միջավայրում՝ ուսումնական հաստատությունից դուրս:

3) ԺՄԻ կրթության ոլորտում կոմպետենցիաները պետք է մշակվեն կրթության բովանդակության բաղադրիչներին համապատասխան՝ շեշտադրելով՝

- գիտելիքը և ըմբռնումը (սովորողը տեղեկացված է, գիտի և հասկանում է *մարդու իրավունքների սկզբունքները և երեխայի իրավունքները*),

- վերաբերմունքը և արժեքները (սովորողը իր գործողություններով և վարքագծով ցույց է տալիս *աշխույժ հետաքրքրություն մարդու իրավունքների և հասարակության մեջ արդարության հարցերի նկատմամբ*),

- կարողություններ և հմտությունները (սովորողը կարող է *համագործակցել այլ մարդկանց (երեխաների, սովորողների) հետ մարդու իրավունքների և ժողովրդավարության արժեքների պաշտպանության հարցերում*):

4) Կոմպետենցիաները փոխկապակցված են, և դրանցից ոչ մեկը մյուսի նկատմամբ գերակայություն չունի:

4. Կրթության արդյունքում ակնկալվող կոմպետենցիաներին հասնելու համար ապահովել ժողովրդավարության և մարդու իրավունքներին վերաբերող թեմաների ներառումը ոչ միայն «Հասարակագիտություն» առարկայի, այլ նաև ուսուցման ընդհանուր բովանդակության մեջ:

Մասնավորապես, անհրաժեշտ է.

ա. Առաջին հերթին առարկայական չափորոշիչներում և ծրագրերում ներառել ԺՄԻ կրթությանն առնչվող հարցեր: Այնուհետև ապահովել դպրոցի տարրական, միջին և ավագ աստիճաններում ուսուցանվող հասարակագիտական առարկաներում ԺՄԻ կրթության բովանդակությանն առնչվող համապատասխան մակարդակ:

բ. Ուսուցանել ժամանակակից աշխարհում պահանջվող կոմպետենցիաներ՝ ապահովելու համար շրջանավարտների լիարժեք քաղաքացիական և մասնագիտական մասնակցությունը հասարակական կյանքին: Կարևոր է ուսուցման բովանդակությունը կառուցել փոխկապվածության, փոխկախվածության, համակեցության արժեքների և սովորողների՝ հանրային բարիք ստեղծելու գործընթացի կարևոր մասնակիցը լինելու գաղափարների վրա:

գ. Հնարավորություններ ընձեռել ոչ միայն ժողովրդավարական արժեքները և մարդու իրավունքները հասկանալու, այլև համայնքային կյանքին առնչվող սոցիալական նախագծերին մասնակցելու միջոցով ԺՄԻ կրթության կայացմանը նպաստող գործնական հմտությունները զարգացնելու համար:

5. Բարելավել և կատարելագործել ԺՄԻ կրթության գնահատումը՝ ինչպես սովորողների առաջադիմության, այնպես էլ ուսումնական հաստատությունների գործունեության տեսանկյունից:

ա. Ստեղծել առարկայական չափորոշիչների և ծրագրերի յուրացման գործընթացի և արդյունքների մշտադիտարկման, շարունակական բարելավման մեխանիզմներ՝ ԺՄԻ կրթության տեսանկյունից:

բ. Ներդնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, նրանց առաջադիմության գնահատման ժամանակակից ձևեր՝ կիրառելով բազմապիսի գնահատման գործիքներ, այդ թվում՝ թեստեր, շարադրություններ, խմբային աշխատանքներ, նախագծերի մշակում և իրականացում, հարցազրույցների վարում, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում և այլն, որոնք կնպաստեն սովորողի կարողությունների և ընդունակությունների բազմակողմանի դրսևորմանը:

գ. ԺՄԻ կրթության գործընթացի գնահատման նախապատրաստական և իրականացման աշխատանքներում ներգրավել սովորողներին և նրանց ինքնավարության մարմիններին՝ ապահովելով այդ ոլորտում սեփական գործունեության վերլուծությունը և գնահատման թափանցիկությունը:

դ Ապահովել հանրակրթական դպրոցի գործունեության արտաքին գնահատումը և մշտադիտարկումը ԺՄԻ կրթության տեսանկյունից՝ ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներգրավմամբ:

ե. Ամեն տարի ուսումնական հաստատություններում սահմանել ԺՄԻ կրթության միասնական շաբաթ, որի շրջանակներում անցկացնել մրցույթներ և ստուգատեսներ:

6. Ուսումնական հաստատությունների ժողովրդավարական կառավարումն ապահովելու և ժողովրդավարության ու մարդու իրավունքների վրա հիմնվող ուսուցումը բարելավելու նպատակով իրականացնել օրենսդրական նախաձեռնություններ:

Մասնավորապես անհրաժեշտ է ապահովել.

ա. Յուրաքանչյուր ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակումը՝ ԺՄԻ կրթության սույն հայեցակարգին համապատասխան,

բ. Ուսումնական հաստատության կառավարման գործադիր մարմինների՝ հաշվետվողականությունը հաստատության տարեկան աշխատանքային պլանի իրագործման առումով,

գ. Օրենսդրական փոփոխությունների միջոցով հանրակրթական հաստատության կառավարման կոլեգիալ մարմնի՝ խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացումը և նրա ձևավորման կարգի վերանայումը՝ վերջինիս հաշվետվողականության բարձրացման նպատակով,

դ. Ուսումնական հաստատության խորհրդի նիստերի և դրանց որոշումների հրապարակայնությունը,

ե. Ուսումնական հաստատության ընթացիկ գործունեությանը վերաբերող կանոնադրական պահանջների լիարժեք իրականացումը,

զ. Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատման համակարգում ժողովրդավարական կառավարման ցուցիչի ներառումը,

է. Դասալսումներին և ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացին ծնողների մասնակցության կանոնակարգումը:

7. Ակնկալվող արդյունքները

Սույն հայեցակարգի կիրարկման վերջնարդյունքում կունենանք ուսումնական հաստատություններ, որոնցում.

1. Հարգված են մարդու հիմնարար իրավունքները:

Ուսումնական հաստատության կառավարման մարմինների, ուսուցիչների և սովորողների հարաբերությունները հիմնված են մարդու իրավունքների հարգման վրա:

2. Ներգրավված և մասնակցող սովորողներ:

Սովորողները ներգրավված են ուսումնական հաստատության կյանքում, նրանց ձայնը լսելի է, նրանք ազդում են իրենց ուսումնական հաստատությանն առնչվող որոշումների վրա:

3. Իրենց ներուժը բացահայտած և այն հանրային բարիքին ծառայեցնելու պատրաստ սովորողներ:

Սովորողներն ուսուցիչների, ծնողների, դասընկերների և աշակերտական ինքնավարության մարմնի աջակցությամբ բացահայտել են իրենց ուժեղ կողմերը (ակադեմիական և ոչ ակադեմիական) և պատրաստ են դրանք ծառայեցնելու հանրությանը:

4. Սովորողների հետ արդյունավետ հաղորդակցվող և համագործակցող մանկավարժական և վարչական աշխատողներ:

Մանկավարժները կարողանում են լսել սովորողներին, հարցերը դիտարկել սովորողի տեսանկյունից և նպաստել սովորողների համակողմանի աճին:

5. Ուսումնական հաստատության որոշումները կայացվում են մասնակցային սկզբունքով:

Ուսումնական հաստատությունում տիրում է այնպիսի մթնոլորտ, որտեղ ուսուցիչները և սովորողներն ազատորեն արտահայտում են իրենց տեսակետները և դիրքորոշումները: Նրանց ձայնը լսելի է:

6. Առկա է գործընկերային արդյունավետ հարթակ:

Ուսումնական գործընթացի մասնակիցները և շահակիցները՝ սովորողները, ուսուցիչները, դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները, ծնողները, հասարակական և պետական կառույցները համագործակցված նպաստում են հաստատությունում և համայնքում ԺՄԻ կրթության արմատավորմանը:

V. Եզրափակիչ դրույթներ

Սույն հայեցակարգի դրույթներն իրականացնելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կազմում է նախագծեր և ծրագրեր, որոնք պետք է տեղ գտնեն ՀՀ կրթության զարգացման հաջորդ պետական ծրագրում և իրականացվեն առաջիկա տասը տարիների ընթացքում:

Վերոհիշյալ նախագծերն անհրաժեշտ է իրականացնել հետևյալ ուղղություններով.

- 1) Ապահովել պետական հովանավորության քաղաքականություն և աջակցություն ԺՄԻ կրթության ոլորտում՝ ակնկալելով տեսանելի դարձնել հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:
- 2) Կատարելագործել ԺՄԻ կրթության բովանդակությունը և ուսուցումը, ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը՝ հաշվի առնելով արդի մարտահրավերները:
- 3) ԺՄԻ կրթության իրականացման գործընթացում ներառել հասարակության տարբեր խմբերին և կազմակերպություններին՝ ձևավորելով համագործակցության միջավայր և ապահովելով համակողմանի մասնակցություն: